



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 03/16**

16.08.2016թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),

քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., <Օ-247>)¹ 77-րդ հոդվածի 1-ին մասը, 233 ցուցիչ 1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի առաջին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը,

ՊԱՐԵՏ

Քաղաքացիներ Վաչիկ Կարապետյանը և Լուսինե Ամիրբեկյանը (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ Տիգրան Եգորյան) 2016 թվականի մարտի 14-ի դիմումով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանից խնդրել են որոշել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., <Օ-247>)² 77-րդ հոդվածի 1-ին մասը, 233 ցուցիչ 1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի առաջին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը 2016թ. մարտի 25-ին անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ թիվ ՍԴԴԿՈ/2-10 որոշմամբ մերժել է դիմումի ընդունումը Հայաստանի

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

² Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի մասով՝ նշված քաղաքացիադատավարական դրույթի սահմանադրականության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 22.04.2008թ. թիվ ՍԴՈ-752 որոշման առկայության հիմքով:

Նույն դատական կազմի որոշմամբ՝ Դիմողի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով ընդունվել է քննության։ Նիստը նշանակված է 2016թ. սեպտեմբերի 6-ին։

Դիմողները գտնում են, որ իրենց կողմից վիճարկվող դրույթները չեն ապահովում իրավական որոշակիություն, որի արդյունքում ստեղծվում է հայեցողական կիրառմամբ դատական պրակտիկա։ Ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթները չեն ապահովում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացում։

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող դրույթներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին, այլ նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 16.10.2012թ. ՍԴՈ-1052 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկվեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից։

Ուստի, Դիմողը խնդրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի առաջին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր։

ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Գիտավերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով։

Ուստի, սույն գործով քննարկման առարկա կդարձվի բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի լուսի ներքո:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում նախ անդրադառնալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 16.10.2012թ. թիվ ՍԴՈ-1052 որոշմանը, որի մեջ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է իմանավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:**...

...Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության իման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում իմանավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը:»:

Կամ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 18.12.2012թ. թիվ ՍԴՈ-1062 որոշմամբ արձանագրել է.

«6. Անդրադառնալով դիմողի բարձրացրած երկրորդ իմանահարցին՝ կապված վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված իմանահարցը քննության առարկա է դարձել իր՝ 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ-1052 գործով: Նշված և սույն գործով քննության առարկաների միջև տարբերությունը կայանում է նրանում, որ սույն գործով դիմողի կողմից բարձրացված վերը նշված հարցադրումը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկմանը, իսկ ՍԴՈ-1052 որոշումը վերաբերում էր գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգին: Այսուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության

սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես կիրառելի են սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ ամրագրված համապատասխան իրավական դիրքորոշումները:

Հարկ համարելով անդրադառնալ ՍԴՈ-1052 որոշման միայն եզրափակիչ մասում ամրագրված իրավական դիրքորոշումներին սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր՝ վերը նշված որոշման եզրափակիչ մասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վիճարկվող՝ իրապարակվելու պահից, դրույթը՝ «այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունքը ունեցող անձին...»:

Նոյն որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի՝ տվյալ գործով վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված 402-րդ հոդվածը, **որպես տվյալ գործով վիճարկվող դրույթի կիրառման ընթացքում անձի իրավունքների պահովման երաշխիք**, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող «այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սույնեկտներին»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **իրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **ժամանակ** ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **և այն էլ միայն այն դեպքում, եթե նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենորյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա իմնավոր բողոք ներկայացնելու համար»:**

Այսպիսով, սահմանադրական դատարանի վերը նշված որոշումների բովանդակությունից բխում է, որ **Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է**

հաշվել այն պահից, երբ անձն օբյեկտիվորեն իրական հնարավորություն ունի ամբողջությամբ ծանոթանալու դադարական ակտի բովանդակությանը (դադարական ակտն իր գրամադրության դրակ ունենալու, իրեն հասանելի լինելու պահից):

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմից անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

* * *

Սույն սահմանադրախրավական վեճի շրջանակներում վիճարկվող քաղաքացիադատավարական նորմի բովանդակությունը հետևյալն է.

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը 233.1 հոդված

¹ Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

² Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը

1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) Վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է, կամ այն մերժվել է...

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի մասի 1-ին կետից բխում է, որ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, այն է՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո,

2) բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է, կամ այն մերժվել է:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վճռաբեկ բողոք բերելու համար **սահմանված ժամկետը** նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածում:

Համաձայն նշված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Գործն ըստ էության լուծող դադարական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ սույն հոդվածի 3-րդ կետով նախադասկած հիմքով դադարական ակտը բողոքարկելու դեպքերի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221.1-րդ հոդված

Վերաբննիչ դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը

Վերաբննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դադարական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Ստացվում է, որ վերաբննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դադարական ակտի դեմ վճռաբեկ բողոքը դադարական մասնակցի կողմից վճռաբեկ դադարան կարող է բերվել դրա հրապարակման, այսինքն՝ բողոքարկվող դադարական ակտն իր դրամադրության դաշտում կատարված առաջնային դադարական ակտի դադարական մեջ մտնելու պահից հետո մեկամյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով օրենսդիրը կանոնակարգել է դատական ակտի բողոքարկման ժամկետը (այն է՝ հրապարակման պահից հետո մեկ ամիս) բաց

թողնելու պարագայում առաջացող իրավական հետևանքը (այն է վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը), ինչպես նաև այդ ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու դատավարական հնարավորությունը:

Օրենսդրութեն դատական ակտի բողոքարկման ժամկետային սահմանափակում նախատեսելը և այդ ժամկետը դատավարության մասնակցի կողմից չպահպանելու պարագայում բացասական իրավական հետևանք սահմանելը՝ բողոքն առանց քննության թողնելը, լիովին բխում է արդար դատաքննության և արդարադատության մատչելիության բովանդակությունից և չի հակասում վերջիններիս:

Նման սահմանափակում և հետևանքներ նախատեսելը պետության իրավասությունն է ինքնուրույն սահմանելու անձի դիմումի (բողոքի) ընդունելիության պայմանները և այդ պայմանները խախտելու պարագայում առաջացող իրավական հետևանքները:

Հաջորդ դատավարական պայմանը, որի միաժամանակյա առկայությունը պարտադիր է վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու համար՝ որպես իրավական հետևանք, բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության բացակայությունն է, կամ դրա առկայության դեպքում վերջինի մերժումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ (Դատավարական ժամկետների վերականգնումը)

1. Դադարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դադարական ժամկետը բաց թողնելու պարբռառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դադարանը կայացնում է որոշում:

Վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողնման պարագայում այդ ժամկետի վերականգնման միջնորդություն ներկայացնելու և այն բավարարելու կառուցակարգի նախատեսումը բխում է անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու, դատական պաշտպանության գործուն մեխանիզմներ նախատեսելու և արդարադատության մատչելիությունը ապահովելու պետության պողիտիվ պարտականությունից:

Դատավարական ժամկետների բացթողնման պարագայում դատավարության մասնակցի միջնորդությամբ դատարանի որոշմամբ այդ ժամկետները վերականգնելու հնարավորությունը դատարանի հայեցողությանը վերապահելը բխում է արդարադատության արդյունավետությունից:

Օրենսգրքով նախատեսված դատավարական ժամկետը, որը բաց է թողնվել դատավարության մասնակցի կողմից իր կամքից անկախ պատճառներով, այդ

պատճառերի գնահատման հարցում դատարանի հայեցողության սահմանափակումը և առանց դատարանի գնահատման իրավունքի ուժով հարգելի համարելու դատարանի պարտականություն դիտելը՝ անկախ բողոք բերած անձի միջնորդությունից, կիմաստագրկի դատավարական ժամկետների նշանակությունը և դատարանին կպարտավորեցնի յուրաքանչյուր անգամ քննարկման առարկա դարձնել բոլոր ժամկետանց բողոքները՝ պարզելու համար, թե արդյոք ժամկետը բաց է թողնվել անձի կամքից անկախ, թե՝ ոչ, հարգելի, թե՝ անհարգելի պատճառներով՝ անկախ բողոքաբերի այդպիսի միջնորդությունից:

Առանց այդ ժամկետը հարգելի համարելու և համապատասխան հանգամանքները դատարանին շարադրելու միջնորդության առկայության դատարանն ստիպված կլինի կռահել թե բողոք բերելու ժամկետի բացթողումն ինչ հանգամանք(ներ)ով է պայմանավորված եղել և արդյոք այդ հանգամանք(ներ)ը հարգելի է (են), անձի կամքից անկախ է (են), թե՝ ոչ: Նման մոտեցումը, կարծում ենք, ավելորդ կծանրաբեռնի դատարաններին և չի բխի արդարադատության արդյունավետության և մատչելիության սկզբունքից:

Նման պայմաններում, փաստորեն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում դատարանի հայեցողության սահմանափակման պարագայում անձի արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքը ձեռք կբերի անսահմանափակ, բացարձակ բնույթ, քանի որ դատարանը ստիպված կլինի ընդունել բոլոր բողոքներն անխտիր և հայեցողության չի ունենա գնահատելու ժամկետանց բողոքների ժամկետի բացթողնման պատճառները:

Նման մոտեցումն ինքնին կհակասի իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով մի դեպքում օրենսդիրը կսահմանի վճռաբեկ բողոք բերելու ժամկետային սահմանափակում, մեկ այլ դեպքում դատարանին կզրկի ժամկետանց բողոքներն առանց քննության թողնելու հայեցողությունից:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ վճռաբեկ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառները գնահատելիս դատարանին զերծ պահել հայեցողություն դրսևորելուց անհնարին է, առավել ևս, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ և դատական նախադեպերով հստակ սահմանված չեն այդ ժամկետի բացթողնման պատճառները անձի կամքից անկախ կամ անձի կամքից կախված, հարգելի կամ անհարգելի համարելու հիմքերը և/կամ չափանիշները: Այս իմաստով խնդիրն առավելապես ոչ թե գործող քաղաքացիադատավարական նորմերի հակասահմանադրականության մեջ է, այլ օրենսդրական բացի՝ նշված հիմքերի և/կամ չափանիշների օրենսդրական ամրագրման բացակայության տեսանկյունից:

Վերոնշյալի կապակցությամբ հատկապես անհրաժեշտ է մեջբերել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դիրքորոշումը՝

կապված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նույնաբռնվանդակ ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հետ:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2015 թվականի 22 դեկտեմբերի թիվ ՍԴՈ-1249 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Վերոնշյալի հաշվառմամբ, ելնելով նաև անձի՝ դափարանի մարդեխուզյան և արդար դափաքննության իրավունքների առավել արդյունավեց իրացման երաշխավորվածությունից, սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում արձանագրել որ, որպես ընդհանուր կանոն, այն պարագայում երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է, հետապնդում է իրավաչափ նպարակ, այն է՝ հնարավորություն դալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը։ Միևնույն ժամանակ, որպես հարուստ կանոն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում դափարան ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված չէ անձի կամքով, առաջացել է անձից անկախ պարբառներով, սահմանադրական դափարանն արձանագրում է, որ նշյալ դեպքերում ներկայացված միջնորդությունը բավարարելը համապատասխան դափարականությունն է հանդիսանում։

Ըստ այդմ, սահմանադրական դափարանն արձանագրում է նաև, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դափարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պարբառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դափարական ակտը բողոքարերից անկախ պարբառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքարերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավասարող վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դափարանը՝ դիմուլ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը։ Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դափարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով /ex jure/՝ համապատասխան դափարական ակտում այդ մասին փաստելով։

9. Միևնույն ժամանակ, սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դափարական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպարակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն

ամրագրել: Այս համապեքսպում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև <<Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը՝ նշելով, որ «... ոչ միասնական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ծևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոդավոր, ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակելուային կիանդիսանան ժամկետի բացթողման հարգելիությունը գնահատելիս»:

Հերևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի դրվագի իրավահարաբերության արդյունավելության, ինչպես նաև դատարանների հանրային-իրավական վարքագծի կանխադեսելիության մակարդակի բարձրացմանը»:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարուց չեն համարություն կատարել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի առաջին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին:

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան